



## ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԱՐԵՒԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԸ, ՀԱՅԵՐԸ ԵՒ

# ԹՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔ

Արեւելքի քրիստոնեաները կը գաղթեն մեծ թիւերով, իսկ անդին Թուրքիա կը ներխուժէ արաբական աշխարհ այս անգամ խաղաղութեան վէճըով գրաւելու արաբներու նախ արտերը՝ ետքը տնտեսութիւնը: Թուրքիա կը շահագործէ պաղեստինեան հարցը եւ Իսրայէլի կը հակադարձէ հիւսիսային Քուրտիսթանի անկախութեան ծրագիրներուն նեցուկ կանգնելով: Մինչ Քրիստոնեաները մեծ թիւերով կը գաղթեն եւ այս մեծ թիւին մէջ մաս կը կապեն հայերը: Եւ ինչպէս 100 տարի առաջ երբ քրիստոնեայ ազգ մը կը բնաջնջուէր աշխարհի աչքերուն առջեւ եւ ոչ մէկ արեւմտեան երկիր կը փորձէր օգնել անոնց, այսօր ալ նոյնպէս, երբ անոնք կը գաղթեն իրենց դարաւոր ապրած հայրենական հողերէն, արեւմուտքը սրտաբաց կ'ընդունի վանոնք Աւստրալիոյ, Շուէտի, Գերմանիոյ Գանատայի եւ Միացեալ Նահանգներու մէջ:

Պաղեստինեան հարցով, արաբները յուսահատ արեւմուտքէն՝ գրկաբաց կ'ընդունին թուրքերը իրենց առեւտուրով, մշակոյթով եւ միջնորդութեամբ: Մի քանի տարի առաջ Սուլթան Համիտի յուշարձանը տնկուեցաւ Լիբանանի Թրիփոլի քաղաքին մէջ: Հեռու չէ որ ուրիշ գիւղի կամ քաղաքի մը մէջ ալ «խաղաղութեան նաւատորմի» թատերգութեան նման դէպքէ մը ետք Քէմալ Աթաթուրքին արձանը տնկուի իբրեւ խաղաղութեան եւ արդարութեան հոմանիշ: Իսկ Պաղեստին, Մուսուլի եւ Քերքուկի մէջ քրիստոնեայ համայնքը այլեւս կարծես աւելորդ եւ նոյնիսկ անբաղձալի տարր դարձաւ: Պաղեստինի քրիստոնեայ համայնքն ալ գոյութեան պայքար կ'ապրի: Իսկ Պարսկաստանի քրիստոնեայ համայնքը իսլամական յեղափոխութենէն ի վեր, թէեւ ոչ մէկ հալածանքի ենթարկուեցաւ՝ սակայն խանգարուած ներքին խաղաղութիւնը եւ արտաքին աշխարհի հետ տեղի ունեցած անկայուն վիճակը՝ դիրացուց անոնց գաղթը: Այս երկիրներուն մէջ հայերը միշտ կարելոր թիւ կը կապեն:

Թրքական խաղաղութեան նաւատորմը կը ներխուժէ արաբական աշխարհ ուր երկար տարիներէ ի վեր տեղացի հայեր կ'ապրին արաբներու հետ խաղաղութեան մէջ՝ վայելելով քաղաքացիութեան ամէն իրաւունքներ: Թուրքիոյ ներխուժումը աղանիով եւ ձիթնիի ճիւղով, աժան ապրանքներ Թուրքիայէն արտածելու գրգռիչ պայմաններով, արաբ ունկնդիրը ներգրաւող ֆիլմերով եւ յայտագիրներով, առանց տուրքերու եւ մուտքի արտօնագրի առիթներ ստեղծելով արաբ վաճառականին՝ խաղաղութեան վէճերով թուրքերը ներս կը մտնեն իբրեւ բաղձալի «երոպացի» դրացի մը:

Անշուշտ թէ, առաջին հերթին խուժապի կը մատնէ հայ համայնքը եւ դժուարին կացութիւն կըստեղծէ անոր վերաբերելու զինք խանգարող վիճակ մը դիմագրաւելու մէջ: Սակայն երբ բոլոր համայնքները վայն կ'ընդունին ուրախութեամբ՝ հայկական համայնքը իրաւունք պիտի ունենա՞յ տեւական իր դժգոհութիւնը յայտնելու թուրքին ներկայութենէն երբ Հարաւի մէջ հիւանդանոցներ եւ դպրոցներ կը նուիրուին ժողովուրդին:

Այս կնճռոտ կացութեան հետ հայը ապրիլ պիտի սորվի: Պիտի ապրիլ սորվի կացութեան հետ՝ անդադար բողոքելու փոխարէն, աննկատ առնելով անոնց ներկայութիւնը: Յոգնեցուցիչ բողոքի ցոյցեր կապմակերպելու փոխարէն՝ աւելի կառչելու մեր կառոյցներուն եւ մեր մշակոյթին, աւելի մասնակցութիւն բերելով լիբանանեան պետական հաստատութիւններէն ներս, ըլլան անոնք ապահովական ուժեր, բանակ կամ այլուր: Աւելի սերտ եւ համերաշխ յարաբերութիւններ ստեղծել հայահոծ վայրերու մէջ ապրող մեր դրացի լիբանանցիներուն հետ՝ մեր առօրեայ կեանքին մէջ կամ ընտրութիւններու ժամանակ:

Մեր վրայ եկող այս հուժկու նոր ալիքը դիմադրելը մեր կարողութիւնէն վեր է: Արաբական աշխարհը, մէջն ըլլալով քրիստոնեաները մոռցած են թուրքերու 400 ամեայ դառն անցեալը շրջանին մէջ: Պուրճ հրապարակի նահատակաց յուշարձանը այլեւս որեւէ նշանակութիւն չի ներկայացներ՝ կարծես ուրիշ լիբանանցիի: Մայիս 6, նահատակաց օրն նոյնիսկ չի յիշուիր այլեւս:

Արեւելքի քրիստոնեաները կը գաղթեն, իսկ թուրքերուն շրջան գալով՝ հայերուն պատճառ կ'աւելնայ նոր ոստաններ փնտռելու՝ Միջին Արեւելքէն դուրս: Թրքական ներխուժումը դէպի արաբական աշխարհ ջղագրգռութեամբ դիմագրաւելը բաւականին սպառիչ, անօգուտ եւ նոյնիսկ վնասակար կրնայ ըլլալ հայ համայնքին: Չափապանց զգոյշ, ձկուն եւ խելացի՝ «Տաւուօղլու»ական դիւանագիտական եւ պաղարիւն, «խաղաղասէր» կեղծ ժպիտով դիմաւորել պէտք է սորվինք, մեզի անհանդուրժելի այս նոր երեւոյթը եւ փորձութիւնը:

Ս. Բ.